եւ չարչարանս կրեցաք ի բազմաց վասն վախճանի որբոյս· այլ
նեղութեան մեր և բազում վշտի պատճառաւ լինողք ոչ յերկա-
բեմք· այլ թողումք անաչառ տեհնին Քրիստոսի, զոր ի ման-
կութենէ վաստակոց եւ ի հալալ արդեանց իմոց ի վայելումն ա-
նարժան անձին իմոյ· քանզի ոչ ունէի ժառանգ մարմնաւոր մը-
խիթարութեանս անցաւոր եւ ունայն կենցաղոյս վասն ամլու-
թեան, այլ ընթեռնլով զսուրբ գրեանքս մխիթարեալ հանգար-
տէր այրեցեալ լեարդս իմ և տօչորեալ սրտիկս իմ հանգոյն Ան-
նայի քաղցնոյր սրտիկս արտասուաթոր աչօք· հայիֆ ի թռչունս
երկնից աւերի եղաւ է. դառնամ յիս հայիֆ կեանքս իմ հարամ է:
Ապա ըստ իմաստնոյն, որ ասէ երանի ամլոց որ ոչ ծնան, և այլն·
զի թէպէտ և մարմնաւորէն զրկեալ եմք, այլ ազօթիւք հարց եւ
եղբարց հայցեմք ի Քրիստոսէ· որ ի հոգևորէն ո՛չ զրկէ· ըստ
այնմ որ ասէ· երանի որ ունիցի զաւակ ի Սիոն· և այլն: Ըստ
այսմ յուսոյ և յերանուէտ ձայնին ետու զսուրբ գրեանքս այսոքիկ,
ի դուռն Սրբոյն Սարգսի Զօրավարին եւ որդւոյ նորին Մարտիրոսին,
ի Կեսարիա քաղաքին· ոչ թէ ի փարթամութենէ և ընչաւէտութենէ·
այլ յաղքատութենէ եւ ի չքաւորութենէ ի փառս Քրիստոսի եւ
յուսոյ արքայութեան նորա, ի թվիս հայոց ՌՃԴ (= 1655) ա-
մին, ի ժամանակս խարազնազգեաց հայրապետին Տեառն Փիլիպ-
պոսի վերադիտողի սուրբ Աթոռոյն Էջմիածնայ և գիտապետու-
թեան Նահանգի տանն Կիլիկիոյ· Տեառն Ներսէսի Սեբաստացւոյ
և առաջնորդութեան Մայրաքաղաքիս Կեսարիոյ, որ է Մաժաք
հին· Տէր Թորոս վարդապետին, որ յետոյ կաթողիկոս եղև ի Սիս:

Այս ըստ տէրունական բանին որ ասէ· ուր գէշն իցէ անդր
ժողովեսցին արծուիք· հոգևոր արծուիքն են աստուածաբան րա-
բունապետին մեր· զի ի գալ նոցա յայսմ քաղաք· որոճելով եւ
խրատելով փրկութիւն լիցի հաւատացելոց: Այլ և յիշատակ փո-
խեցելոյն (= Գրիգոր պատրիարքին) առ Քրիստոս ՌՁԵ (= 1636)
թվին· հոգևոր ... (յիշատակարանը կիսատ) (Կոլոտ· էջ 78-80):
Կեսարացի պտրք·ին Ս· Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիին պատին
քով թաղուիլը կը յիշատակէ նաև Երեմիա Չէլէպի իր պատմու-
թեան մէջ և կը յարէ թէ մահն ալ տեղի ունեցած է ՌՁԴ (=
1635) թուին (Թծակ· էջ 74):

Գրիգոր պտրք· հմուտ էր նաև ժամանակին գիտութեանց
ուստուրլաբի եւ երկրաչափականին արուեստի· երկու գիրք յօրինած է